## ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ՝ ԱՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ ԷՐԻԿ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ

11.07.2022 10:32

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը շնորհավորել է ԱՀ փաստաբանների պալատի նորընտիր նախագահ Էրիկ Բեգլարյանին: Նա մասնավորապես նշել է.

Շնորհավորում եմ պարոն Էրիկ Բեգլարյանին՝ ԱՀ փաստաբանների պալատի նախագահ ընտրվելու կապակցությամբ և մաղթում արգասաբեր ու բեղմնավոր գործունեություն:
Պարոն Բեգլարյանի ընտրությամբ Արցախի Հանրապետության անկախ փաստաբանությունը կպահպանի և կամրապնդի իր հեղինակությունը:
Վստահ եմ, որ մեր պետությունների փաստաբանական հմայնքների միջև համագործակցային հարաբերությունները թևակոխելու են զարգացման նոր փուլ:
Հայաստանի Հանրապետության փաստաբանական համայնքը միշտ եղել է և լինելու է Արցախի գործընկերների կողքին:
Միևնույն ժամանակ, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել տիկին Օլյա Ալթունյանին դժվար ժամանակներում ԱՀ փաստաբանների պալատի նախագահի պարտականությունները պատվով և ջանասիրաբար կատարելու համար:
Լիահույս եմ, որ նա կշարունակի իր գործունեությունը ի նպաստ ԱՀ փաստաբանական ինստիտուտի:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })